

ՊԱՇՏՈՆ**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ****ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ****ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿՁԲՆԱԺԱՄԿԵՏ****ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ**Ընդհանուր իրավախորհրդատվության բաժնի
մասնագետ

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

12/12/2022

06/01/2023

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով պատասխանատու է լինելու ստորև նշված աշխատանքային պարտականությունները կատարելու համար.

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մասնակցում է պայմանագրերի օրինակելի ձևերի կազմման և մշակման աշխատանքներին,
- Մասնակցում է Բանկի այլ ստորաբաժանումների կողմից կազմված ակտերի իրավական փորձաքննությանը,
- Մասնակցում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունների կողմից ներկայացվելիք փաստաթղթերի իրավական փորձաքննությանը,
- Կազմում է իրավական եզրակացությունների նախագծեր,
- Ուսումնասիրում և համապատասխան ստորաբաժանմանը իրավական կարծիք է տրամադրում հաճախորդների՝ ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացված դիմում-պահանջների պատասխանների վերաբերյալ,
- Տրամադրում է իրավաբանական խորհրդատվություն Բանկի բոլոր ստորաբաժանումներին,
- Ուսումնասիրում է վարկային փաթեթները,
- Փոխանցում է սեմինարների և վերապատրաստումների արդյունքում ստացված գիտելիքը և հմտությունը մյուս աշխատակիցներին,
- Իր կողմից տրամադրվող տեղեկատվության և հաշվետվությունների արժանահավատության ապահովում,
- Բանկի ներքին իրավական ու անհատական ակտերով սահմանված և/կամ անմիջական ղեկավարի կողմից պահանջվող հաշվետվությունների տրամադրում,
- Կատարում է իրավաբանական վարչության ղեկավարի կամ անմիջական ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարականների կատարումը,
- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնություններ և պահանջների իրականացման հսկողություն և ապահովում:

ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն իրավաբանական կրթություն
- Նվազագույնը 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
- Բանկային գործունեության, բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն,
- ՀՀ օրենսդրության՝ ներառյալ Բանկային օրենսդրության, իմացություն
- Համակարգչային գիտելիքներ
- Անգլերեն և ռուսերեն լեզուների իմացություն
- Հաղորդակցման հմտություններ
- Վերլուծական հմտություններ
- Կատարողական ցուցանիշների ապահովման ունակություն

- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում
- Փորձով և գիտելիքով կիսվելու հմտություն Նոր աշխատակցի մենթոր լինելու համար
- Հեռավար աշխատանքի արդյունավետ իրականացման ունակություն
- Առաքելության և տեսլականի իրականացում
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Մանրութների նկատմամբ ուշադրություն / լարված գրաֆիկով աշխատելու կարողություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի Նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և Դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴԻ Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն Նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴԻ Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴԻ Բանկ» անվանումով: ԱյԴԻ Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն Նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>